

Մահուամբ լեցուած նայուածքով,  
 Ծերեր, կիներ, տղղաներ,  
 Արձակ մազով, ձեռքերնուն մէջ սանդալին,  
 Փողոցներէ փողոց, լեռնէ լեռ, մոլոր.  
 Կեանքի՛ն, կեանքի՛ն, քաղցր կեանքի՛ն կը վազեն:

## Դ

Յոն, կը տեսնեմ քեզ, ո՛վ վայրագ դու Ոգի.  
 Անզեններուն, տղկարներուն ետեւէ,  
 Մըրըրկելով փլատակներուն մէջ փոշին,  
 Ճերմակ ձիւղ վըրայ դեռ քեզ կը տեսնեմ...  
 Ապարօշիդ մէջ կանանչ,  
 Իբրեւ իժի ծըլարում.  
 Ալփասլանի հոգին ըզքեզ կը պսակէ.  
 Պարեգօտդ այդ պատանքներուն պատանքն է,  
 Եւ քու ձիւղ գորշ ըսթարին ծոպերէն,  
 Յաւերժական բըխումով,  
 Արին մը գաղջ կը կաթի...  
 Եւ դու ինայել չես ուզեր  
 Բոլոր անոնց՝ որոնք թախծոտ թելերով  
 Ճամբուդ վըրայ իրենց արե՛ւը կ'ուզեն:  
 Անձաներէ անձաւ միայն, վերեւէդ,  
 Կը հընչէ բառն ագռաւներու կըռիւնջով.  
 – “Յառա՛ջ, յառա՛ջ”:  
 Եւ քու ճորտերդ աւազակ  
 Կը հետեւին մահ սերմանող արշաւիդ...  
 Կուրծքերէ կուրծք լեարդաբորբ կը մըխան  
 Իրենց սուրէն արեան ակեր բանալով.  
 Կը թաւալեն երիտասարդ գըլուխներ՝  
 Որոնց մազերը սեւ, մազերը խարտեաշ